

ՀՀ Արմավիրի մարզի Ջրառատի գյուղապետարանը հատարարում է մրցույթ համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների խմբի, առաջատար մասնագետների թափուր պաշտոններ զբաղեցնելու համար (ծածկագիր 3.1-3, 3.1-4)

24.01.2013

Տիպ` [Համայնքային ծառայության թափուր պաշտոններ](#)

Հայտատու` ՀՀ Արմավիրի մարզ, Ջրառատի գյուղական համայնք, գյուղապետարան

«Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդված

Արմավիրի մարզի Ջրառատի գյուղապետարանը հայտարարում է մրցույթ գյուղապետարանի աշխատակազմի

1.առաջատար մասնագետի (ծածկագիր 3.1-3) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար.

ա. Կատարում է աշխատակազմի քարտուղարի հանձնարարությունները ժամանակին և պատշաճ կերպով:

բ. Հետեւում է աշխատակազմի քարտուղարի հանձնարարականների համապատասխան ժամկետներում կատարման ընթացքին, որոնց

արդյունքների մասին զեկուցում է աշխատակազմի քարտուղարին :

գ աշխատակազմի քարտուղարին ներկայացնում է իր աշխատանքային ծրագիրը, անրաժեշտության դեպքում, իր լիազորությունների սահմաններում:

դ աշխատակազմի քարտուղարին հանձնարարությամբ մասնակցում է

աշխատակազմի աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին:

ե աշխատակազմի քարտուղարի տնտեսվարող սուբյեկտի իրավունքները և օրինական շահերը:

զ. Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ ներկայացնում է համայնքի շահերն այլ անձանց հետ փոխհարաբերություններում:

է. Ընդհանրացնում է Հ.Հ. օրենսդրության կիրառման պրակտիկան:

ը. Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ նախապատրաստում է համայնքի բյուջետային հիմնարկների և ոչ առևտրային

կազմակերպությունների կանոնադրությունները :

թ Իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ նիազորությունները

2 Հ.Հ. Արմավիրի մարզի Ջրառատի գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ /ծածկագիր3,1-4/

ա. Կատարում է քարտուղարի հանձնարարությունները ժամանակին և պատշաճ կերպով

բ. Հետեւում է աշխատակազմի քարտուղարի հանձնարարականների համապատասխան ժամկետներում կատարման ընթացքին, որոնց

արդյունքների մասին գեկուցում է աշխատակազմի քարտուղարին  
գ իր լիազորությունների սահմաններում անհրաժեշտության դեպքում,  
նախապատրաստում և քարտուղարին է ներկայացնում իր աշխատանքային  
ծրագրերը, ինչպես նաև առաջարկություններ տեղեկանքներ  
հաշվետվություններ ,միջնորդագրեր,գեկուցագիր և այլ գրություններ:  
դ, քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է աշխատակազմի  
առջև դրված գործառնություններից, խնդիրներից բխող իրավական ակտերի  
առաջարկությունների եզրակացությունների և այլ փաստաթղթերի  
պահպանման և արխիվացման աշխատանքները:  
ե. քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է հարկային և ոչ  
հարկային եկամուտների տեղեկատվական տվյալների շտեմարանի հետ  
կապված աշխատանքներից:  
զ ,քարտուղարի հանձնարարությամբ կատարում է իրավաբանական և  
ֆիզիկական անձանց գույքահարկի հաշվառում :  
է, քարտուղարի հանձնարարությամբ կատարում է շենք-շինությունների  
գրանցում և հաշվառում:

Մրցույթը կկայանա 26.02.2013թ ժամը 12.00-ին Ջրառատի  
գյուղապետարանի շենքում (գ.Ջրառատ Արարատյան 2. հեռ 6- 62-50 ):  
Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 15.02.2013թ  
Դիմող ՀՀ քաղաքացիները և փախստականի կարգավիճակ ունեցող անձինք  
պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝  
•դիմում մրցութային հանձնաժողովի անունով (լրացվում է փաստաթղթեր  
ներկայացնելիս )  
•տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների ու  
աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից  
ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝  
դիպլոմների, վկայականների, աշխատանքային գրքույկի (վերջինիս  
բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք  
համապատասխան մարմնից) պատճենները՝ բնօրինակների հետ միասին  
•արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող  
ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի  
պատճենը՝ բնօրինակի հետ միասին  
•մեկ լուսանկար 3X4 սմ չափսի  
•անձնագրի պատճենը  
Փաստաթղթերն ընդունվում են Ջրառատի գյուղապետարանի  
աշխատակազմում և Արմավիրի մարզպետարանի տարածքային  
կառավարման բաժնում՝ ժամը 9.00–ից մինչև 18.00 –ը, բացի շաբաթ և  
կիրակի օրերից:

Հասցե՝ Արմավիրի մարզ, գյուղ Ջրառատ, Արարատյան 2  
Հեռ..՝ +374 231 66250